

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի Հանրապետության կառավարությունը,  
ցանկանալով ամրապնդել երկու երկրների միջև համագործակցությունը մշակույթի, գործընկերային կապերի,  
կրթության, հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառներում և, այդպիսով, աջակցել  
Հայաստանի և Վրաստանի ժողովուրդների բարեկամական հարաբերությունների և փոխըմբռնման հետագա  
ընդլայնմանը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ 1

Մշակույթի նվաճումներին լավագույնս ծանոթանալու նպատակով Պայմանավորվող կողմերը կխրախուսեն  
մշակույթի և արվեստի բնագավառներում կապերը և ստեղծագործական համագործակցությունը, այդ թվում՝

- ա) համագործակցություն նախարարությունների, արվեստի գործիչների, ստեղծագործական միությունների և  
մշակութային հիմնարկների միջև,
- բ) կատարողների հյուրախաղերի կազմակերպում, գործնական կապերի հաստատում հրատարակիչների,  
կոմպոզիտորների, նկարիչների և մշակույթի մյուս գործիչների միջև,
- գ) փառատոների, ցուցահանդեսների, համերգների և թատերական միջոցառումների անցկացում,
- դ) դասախոսների փոխանակումներ, սեմինարների և կոնֆերանսների անցկացում,
- ե) մշակույթի բնագավառի հրատարակումների փոխանակում:

## ՀՈԴՎԱԾ 2

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր երկրում ընդունված կարգի համաձայն, հնարավորություն կընձեռի  
մյուս երկրի քաղաքացիներին՝ գիտական աշխատանքի, ուսման և սույն Համաձայնագրին համապատասխանող  
այլ նպատակների համար օգտվել գրադարաններից, թանգարաններից, պատկերասրահներից, արխիվներից և  
մշակույթի բնագավառի այլ հիմնարկներից:

## ՀՈԴՎԱԾ 3

Պայմանավորվող կողմերը կաջակցեն երկու երկրների մշակույթի, հումանիտար և հասարակական  
գիտությունների, կրթական հիմնարկների, ասոցիացիաների և կազմակերպությունների միջև ուղղակի  
համագործակցության զարգացմանը, Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության  
քաղաքների և շրջանների միջև գործընկերային ու մշակութային կապերի զարգացմանը և ուղղակի  
փոխանակումների հաստատմանը:

## ՀՈԴՎԱԾ 4

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է մյուս Կողմի պատմամշակութային արժեքների  
պահպանությունը: Կողմերը պայմանավորվում են փոխադարձաբար աջակցել մշակութային և գեղարվեստական  
արժեքների վերականգնմանը, պահպանմանը և օգտագործմանը, ինչպես նաև Վրաստանի տարածքում գտնվող՝  
Հայաստանի պատմագեղարվեստական արժեքների և, համապատասխանաբար, Հայաստանի տարածքում գտնվող  
Վրաստանի պատմագեղարվեստական արժեքների վերադարձման հարցի ուսումնասիրմանն ու լուծմանը:  
Կողմերը մասնագետների խմբեր կստեղծեն վերոհիշյալ բնագավառում Կողմերից յուրաքանչյուրի փորձը  
ուսումնասիրելու համար:

## ՀՈԴՎԱԾ 5

Պայմանավորվող կողմերը կքննարկեն իրենց երկրներում, յուրաքանչյուր երկրի օրենքներին  
համապատասխան, մյուս երկրի մշակութային ինստիտուտների հիմնման հնարավորության հարցը:

«Մշակութային ինստիտուտներ» տերմինը ընդգրկում է իր մեջ սույն Համաձայնագրի խնդիրներին համապատասխանող մշակութային- տեղեկատվական կենտրոնները:

#### ՀՈԴՎԱԾ 6

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն երկու երկրների՝ հեղինակային իրավունքի ոլորտում կազմակերպությունների միջև համագործակցությունը և իրենց երկրում մյուս երկրի գրական, երաժշտական, գեղարվեստական ու գիտական բովանդակությամբ ստեղծագործությունների հրատարակումն ու վերահրատարակումը, թարգմանությունը:

#### ՀՈԴՎԱԾ 7

Պայմանավորվող կողմերը կօժանդակեն գրահրատարակչական գործում համագործակցության զարգացմանը, այդ թվում՝ գրքի ցուցահանդեսների, գեղարվեստական գրականության, պարբերական հրատարակությունների փոխանակմանը, երկու երկրների գրողների և հրատարակչական կազմակերպությունների միջև համատեղ նախագծերի ստեղծմանը:

#### ՀՈԴՎԱԾ 8

Պայմանավորվող կողմերը կինտեգրացվառում կաջակցեն երկու երկրների միջև համագործակցությանը հետևյալ ճանապարհով.

- ա) կինտֆիլմերի պրեմիերաների և փառատոների փոխադարձ անցկացում,
- բ) առևտրական և ոչ առևտրական հիմունքներով գեղարվեստական, վավերագրական և փաստագրական կինտֆիլմերի փոխանակում,
- գ) ֆիլմերի համատեղ արտադրություն,
- դ) աջակցություն մի Կողմին՝ մյուս Կողմի տարածքում ֆիլմերի և կինոնյութերի ստեղծման գործում,
- ե) կինեմատոգրաֆիայի ոլորտի աշխատողների, առանձին մասնագետների և պատվիրակությունների փոխանակում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով երիտասարդ կինեմատոգրաֆիստների միջև կապերի զարգացմանը,
- զ) մասնակցություն մյուս երկրում անցկացվող միջազգային կինոփառատոներին:

#### ՀՈԴՎԱԾ 9

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն երկու երկրների միջև հեռուստատեսության և ռադիոհաղորդումների բնագավառում համագործակցությունը՝ մասնավորապես հետևյալ ճանապարհներով.

- ա) հեռուստատեսային և ռադիոհաղորդների փոխանակում,
- բ) հեռուստատեսային և ռադիոնյութերի համատեղ արտադրություն,
- գ) աջակցություն մի Կողմին՝ մյուս Կողմի տարածքում հեռուստատեսային և ռադիոնյութերի ստեղծման գործում,
- դ) հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի մասնագետների փոխանակում:

#### ՀՈԴՎԱԾ 10

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն երկու երկրների լրագրողների և տպագրության ու տեղեկատվական կազմակերպությունների միջև կապերը և հնարավորություն կընձեռեն լրագրողներին իրենց մասնագիտական պարտականությունների կատարման, ինչպես նաև գործնական կապերի հաստատման համար:

#### ՀՈԴՎԱԾ 11

Մեծ նշանակություն տալով հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում համագործակցությանը՝ Պայմանավորվող կողմերը համակողմանիորեն կաջակցեն գիտահետազոտական աշխատանքների անցկացման, համաձայնեցված թեմատիկայով դասախոսությունների ընթերցման, երկու երկրների համապատասխան գիտական հիմնարկների գործունեության և նվաճումներին ծանոթացման գործում գիտնականների, գիտական ընկերությունների ներկայացուցիչների, այլ մասնագետների, ինչպես նաև վերոհիշյալ բնագավառներում գիտական հրապարակումների և հրատարակությունների փոխանակմանը:

## ՀՈՒՎԱԾ 12

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն զարգացումը բարձրագույն, միջնակարգ, պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության և լուսավորության բնագավառներում՝ հետևյալ ճանապարհներով.

ա) կրթության և ուսուցման դրվածքին ծանոթացնելու նպատակով դասախոսությունների և պարապմունքների անցկացման համար դասախոսների և այլ մասնագետների փոխանակում,

բ) ուսման, վերապատրաստման և գիտական ուսումնասիրությունների համար հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառի ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտական աշխատողների փոխանակում,

գ) դպրոցահասակ երեխաների, ինչպես նաև ուսանողների և երիտասարդ մասնագետների ուսուցման համար թոշակի հատկացման հնարավորությունների ձեռքբերում,

դ) աջակցություն մյուս երկրների լեզվի և գրականության ուսումնասիրման գործում,

ե) ուսումնական և մեթոդական գրականության, ուսումնական և դիդակտիկ միջոցների փոխանակում:

## ՀՈՒՎԱԾ 13

Պայմանավորվող կողմերը կհամագործակցեն Կողմերի ազգային կրթական համակարգի զարգացման մասին տեղեկատվական գործում, փոխադարձ պայմանավորվածությամբ հաստատելով համագործակցության կոնկրետ ձևեր՝ նպատակահարմար են գտնում կրթության հիմնարկների վերաբերյալ համատեղ տեղեկատվական բանկի ստեղծումը, որի կազմակերպական սկզբունքները կհստակեցվեն հատուկ արձանագրությամբ:

## ՀՈՒՎԱԾ 14

Պայմանավորվող կողմերը կքննարկեն այն պայմանները, որոնցով, ուսումնական նպատակով, կարելի կլինի ճանաչել ուսման մասին տեղեկանքները, ինչպես նաև մյուս երկրի բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու վկայագիրը:

## ՀՈՒՎԱԾ 15

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն Հայաստանի Հանրապետության և **Վրաստանի** Հանրապետության երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների համագործակցությունն ու կապերը, պատվիրակությունների փոխանակումը, ուսանողական հանդիպումների և մարզական միջոցառումների, մանկական նկարների, ցուցահանդեսների, ինչպես նաև համատեղ այլ միջոցառումների անցկացումը:

## ՀՈՒՎԱԾ 16

Պայմանավորվող կողմերը կհիմնեն մշակութային կապերի խառը հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որը կհավաքվի երկու տարին մեկ անգամից ոչ պակաս հաճախականությամբ՝ հերթականորեն Հայաստանի Հանրապետությունում և **Վրաստանի** Հանրապետությունում. յուրաքանչյուր Կողմ Հանձնաժողովի նստաշրջաններին կնշանակի իր ներկայացուցիչներին:

Հանձնաժողովի պարտականությունների մեջ կմտնեն սույն Համաձայնագրի կատարման ընթացքի քննարկումը, փոխհամաձայնության սկզբունքով մշակութային և գիտական համագործակցության երկկողմ միջկառավարական ծրագրերի մշակումը, ինչպես նաև մշակույթի, կրթության, հումանիտար և հասարակական գիտությունների և սպորտի բնագավառներում Հայաստանի Հանրապետության և **Վրաստանի** Հանրապետության միջև կապերի մասին կարծիքների փոխանակումը:

## ՀՈՒՎԱԾ 17

Սույն **Համաձայնագիրն** ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կգործի մինչև այն օրը, երբ Պայմանավորվող կողմերից մեկը վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին կտեղեկացնի Համաձայնագրի գործունեության դադարեցման վերաբերյալ իր մտադրության մասին:

Չնայած սույն Համաձայնագրի գործունեության ժամկետների ավարտին՝ բոլոր ծրագրերը կամ փոխանակումները, պայմանավորվածությունները կամ նախագծերը, որոնք կնքվել են սույն Համաձայնագրին համապատասխան, բայց չեն իրականացվել, կպահպանեն իրենց ուժը:

Կատարված է Երևանում 1993 թվականի մայիսի 19-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ վրացերեն և հայերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

**Համաձայնագիրն** ուժի մեջ է մտել 1993 թվականի մայիսի 19-ից: